



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

611(07)

S-46



29 JUL 2010

ՀԱՅՐԱՍԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ԿԻՑ
ՀԵՌԱԿԱ ՈՒՍՄԱՆ ԲՅՈՒՐՈ

Ձեռագրի իրավունքով

3478

Բժ. ԴՐ. ՏԵՐ ՄԿՐՏՁՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱ ՅԵՎ
ՖԻԶԻՈԼՈԳԻԱ

611(07)
S-46

ՅԵՐԵՎԱՆ

1931



22 AUG 2013

7951

611 (07)
S-46

ԼԵԶՎԻ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԱՏՄԱ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐ

ԿՈՒՐՍ I. 1981. ԱՌԱՋԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1-2.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1. Ներածական մաս
- 2. Բջիջ:
- 3. Հյուսվածքներ:

1. Ներածական մաս

Կենդանիները և բույսերը մեջ ազդի ունեցող բարդ յերեվույթները ավելի պարզ պատկերացնելու ու հասկանալու համար, վաղուց է, վար գիտնականները կենդանի որդանիզմը համեմատում են Մեքենայի հետ: XVIII դարում հայտնի մատերիալիստ-փիլիսոփա Լամտերին լույս ընծայեց իր հուշակալոր աշխատութունը «Մարդ—Մեքենա» անվան տակ, վորը չնայած կղերի և վոտտիկանության կատաղի հալածանքներին լայն չափով տարածվեց թե Ծրանսիայում և թե Ծրանսիայից դուրս, որինակ ծառայելով շատ շատերի նման աշխատություններին: Հենց վերջերս ահանավոր գիտնական Ժյուլ Ամարը հրատարակեց իր գիտական մեծ արժեք ունեցող ուսումնասիրությունը՝ «Մարդկային Մեքենա» վերնագրով:

Յեվ իսկապես, համեմատելով բուսական և կենդանական մարմիններից մարդու ձևըով կանուցված մեքենաների հետ՝ կարելի չե դանել նրանց մեջ մի շարք նմանություններ:

Որինակ և որդանիզմը, և մեքենան պարբերաբար դբսի աշխարհից բնդունում են վորոշ նյութեր, (Չուբ, թթվածին, սննդանյութեր): Յեվ մեկի, և մյուսի մեջ սննդանյութերի այրում և կատարվում: Այբու-մից սուաջ յեկած եներզյան (ջերմային) փոխարկվում և եներգիայի այլ տեսակների (մեխանիքական, քիմիական, լույսի, էլեքտրական և այլն): Այնուհետև նյութերի այրման և քայքայման հետևանքով գոյացած անպետք և փոտսակար մարմինները պարբերաբար դուբա են շր-պրտվում թե մեկից, թե մյուսից: Բայց բացի այս նմանություններից որդանիզմի և մեքենայի մեջ կան և խոշոր տարբերություններ:

ՊԵՏՆՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 991
ԳՐԱԹ. 6074 (Բ)
ՏԻՐԱԿ 1000

51513
 5295
 3625
 8476

Առաջին տարբերությունը կայանում է նրանում, վոր մինչդեռ որ-
գանիզմը իր մարմնի նյութերի կորուստը, վոր տեղի չի ունենում
կյանքի պրոցեսում անդադար, հենց այդ պրոցեսումն էլ լրացվում
ինքնարեմոնսիում է. մեքենան զուրկ է այդ ընդունակությունից: Աշ-
խատանքից նա մաշվում, քայքայվում է, և այդ բացերը լրացնելու
համար նրան ամեն անգամ պիտի կանգնեցնել և վերանորոգել նոր աշ-
խատանքի համար, նա անընդունակ է ինքնարեմոնսի:

Յերկրորդ տարբերությունն այն է, վոր սրգանիզմը բնգունակ է
ամձան ի հաշիվ սննդանյութերի վորոշ մասերի (սպիտակուցների)
փոխարկման կենդանի նյութի (պրոտոպլազմայի), վոր նա բնգունակ
է մի այլ նյութեր (ճարպեր, ամիալներ) կուտակել իր մեջ, վոր-
պես պահեստանյութ ապագա գործածություն համար:

Վերջապես մի կարևոր տարբերությունն էլ այն է, վոր նույն թակ
ամենապարզ սրգանիզմը ավելի բարդ կարմուխյուն ունի, քան թե
ամենաբարդ մեքենան:

Բայց սրգանիզմի այս համեմատությունը (անայոցիան) մեքենայի
հետ, իննչով լակ մի հաջող մեթոդոլոգիական ձևի, ինքնին դեռ շատ
բիշ բան է ասում կյանքի կնճռոտ պրոբլեմի մասին: Ի՞նչ է կյանքը:
Վոր տեղից տոսչացավ ու զարդացավ նա յերկրի վրա, մարդու ծա-
ղումը, նրա զարգացման ուղիները, ահա հարցերի այն շարանը, վոր-
ոնք դարևը շարունակ տանջել, և զեռ շարունակվում են ամեն
մարդկային միտքը, պահանջելով իրենց վերջնական լուծումը: Իսկ
լուծումը այդ հրատապ հարցերի շատ և շատ հնուտ յեր, քանի վոր
գրանց լուծումը գտնվում էր իդեալիստ-փիլիսոփաների, կամ սխո-
լոստ իմաստասերների ձեռքին, վորոնք բայականումն էլին միտյն
պեկոյլատիվ ու վերացական դատողությունների, կամ էլ ինտրոս-
պեկոյլատիվ (ինքնադիտողական) դատարկ յեղբակացությունների:

Այն ժամանակ միայն, յերբ հոչակավոր գիտնականներ Բեկոնը
(Անգլիայում), և Գալիլեյը (Իտալիայում) XVII դարի սկզբին, ամե-
նաուժեզ պայքար մղելով միջնադարյան սխոլոստիկայի դեմ, հայ-
տարարեցին «փորձն ու գիտությունը» վորպես գիտության ամենա-
գորեզ մեթոդը, այն ժամանակվանից սկսվեց բնական գիտություն-
ների, նախ Ֆիզիկայի և քիմիայի, հետադարձում և կենսաբանության
համար պարզացման մի փայլուն շրջան: Հայթական բնագիտության
այս վերջին յերեք դարերի բնթացքում կատարած նվաճումների հար-
վածները տակ հին իդեալիստական-դուալիստական տեսակետները
տեղի ավելին նոր՝ մատերիալիստական-մոնիստական տեսակետներին:
Ամենից առաջ անսրգանական, հետո և սրգանական աշխարհում, Ֆի-
զիկական և քիմիական հետադուտությունների և տարալուծումների մի-

ջոցով պարզվեց, վոր ամբողջ տիեզերաշենքը, սկսած արեգկայան
հեռավոր մշուշից մինչև մարդու ուղեղը, նյութի զարգացման տարբեր
Ֆազաներ են ներկայացնում. վոր այսպես կոչված կենդանի և անկեն-
դան բնությունը նույն քիմիական տարրերից են կառուցված, և վոր
միանգամայն սխալ և անհիմն է սակավաթիվ գիտնականների այն տե-
սակետը, վորի համաձայն կյանքի յերեվույթները լիովին չեն բացա-
արվում Ֆիզիկայի և քիմիայի որենքներով, այլ վոր նրանց համար ան-
հրաժեշտ է և մի այլ ուժ—Աենսուժ (վիտալիզմ): Գուրս վանդիկով բր-
նության բոյոր բնագավառներից, վորպես անդոր բնական ճանապարհ-
ների (և վորզ գերբնական) բացառելու բնության մեջ տեղի ունեցող
յերեվույթները, դուալիզմը— իր վերջին ապաստանն է գտել կենդա-
նիների և գլխավորապես մարդու մեջ— վիտալիզմի և հոգու ուսմունք-
ների անվան տակ: Բայց ապարդյուն հույսեր: Հենված Ֆիզիկայի և
քիմիայի վրա՝ բերուղիան, և հատկապես մարդու Ֆիզիոլոգիան, ար-
դեն շատ անգամ են ապացուցել և որեցոր ծախալիղ նորանոր ուսում-
նասիրությունների գեռ շարունակում են ապացուցել, վոր այսուկ էլ
նա տեղ չունի:

Այսպես, ունենալով վերին աստիճանի կարևոր նշանակություն
գիտական մատերիալիստական աշխարհայացքի մշակման տեսակետից,
անստոմիան—Ֆիզիոլոգիան վորզ պակաս նշանակություն ունեն և գործ-
նական կյանքում:

Ինչպիսյան է մասնանշել միայն բժշկության և գյուղատնտեսու-
թյան վրա, վորոնք առանց այս գիտությունների կմնային իրենց մինչ
գիտական, ուստպիկ շրջաններում: Նույնն է և մանկավարժություն
վերաբերյալ: Գործ ունենալով յերեխայի հետ, վորը մի բարդ բնու-
ղիական և սոցիալական յերեվույթ է ներկայացնում իրենից, ման-
կավարժը գործ մի դրական, արդյունավետ աշխատանք չի կարող տա-
նել առանց անստոմո-Ֆիզիոլոգիական լայն պատրաստության: Այդ
պատճառով այժմ անվիճելի մի ճշմարտություն է այն, վոր գիտու-
կան մոնիկավարժությունը, հակառակ հին սխոլոստիկ մանկավարժու-
թյան, իր ամբողջ աշխատանքը հիմնում է մանկան բնո-սոցիալական
առանձնահատկությունների ուսումնասիրության, մանկաբանական
գիտելիքների վրա և դրանց հիմքը կազմող չափահաս մարդու անստո-
միայի և Ֆիզիոլոգիայի վրա:

Անստոմիան («անստոմոն» հունարեն նշանակում է անդամահա-
տել), գիտիկ վրա անդամահատություններ կատարելով ուսումնասի-
րում է սրգանիզմի մասերը (որգանները), նրանց ձևվը, կարմուխյու-
նը, զասավորումը: Անստոմիան վերցնում է սրգանիզմին կայուն,
ստատիկ վիճակում:

Ֆիզիոլոգիան (հունարեն՝ «Փյուզիոս» — բնության, «բյուս» — խոտք) դործ ունի սրգանիզմի հետ նրա կենդանի վիճակում: Փորձի և գիտողության միջոցով ֆիզիոլոգիան հետևում է կենդանի մարմնի մեջ տեղի ունեցող կենսական պրոցեսներին, այլ խոտքով, հակառակ անատոմիային ֆիզիոլոգիան ուսումնասիրում է սրգանիզմի գիծակը:

Ֆիզիոլոգիան բաժանվում է բնփաստուր և մասնավոր մասերի: առաջինն ուսումնասիրում է բջիջների և նրանից կազմված հյուսվածքների կենսական յերեմայիցները, յերկրորդն ուսումնասիրում է հյուսվածքներից կազմված գործարանները և համակարգությունների գործունեությունը: Պիտի ստեղ, վոր այս յերկու դիտությունները շատ սերտ կերպով կապված են միմյանց հետ, վորովհետև իտակ սրգանի մասին առանց շոշափելու նրա գործունեությունը (ֆունկցիոն), և բնդհուկատակը, շատ գժվար է, յեթև վոչ անհնար:

2. Բջիջային տեսություն

Դեռ XVII դարում, Անգլիայում, գիտնական Գրեյուն (1667 թ.) ժամանակի շատ անկատար միկրոսկոպով դիտելով բույսերի դանդաղ մասերը՝ նկատեց նրանց մեջ բազմաթիվ մանր—հեղուկով լի փակ տարածություններ, վորոնց նա բջիջներ անվանեց: Նույն ժամանակ և իտալիայում հոջակալուր Մալպիգին նման գիտումներ կատարելով բույսերի վրա հայտնաբերեց հաստ պատերով վանդակիկներ (բջիջներ): Վերջապես XVIII դարի գիտնականներից շատերը (Վուլֆ, Տրեփերանուս, Ոկեն) գրադվում էին միկրոսկոպի ուսումնասիրություններով: Բայց այս բոլոր աշխատանքները պատահական, և վոչ սխտեմատիկ բնույթ կրող ուսումնասիրություններ էին: Միանգամայն այլ բնթաց ստացան սրգանիզմների մանրագիտական հետազոտությունները XIX դարի առաջին կեսից, յերբ մի կողմից սպտիկան ավելի կատարելագործված միկրոսկոպներ ավեց, և յերբ մյուս կողմից միկրոսկոպիայի տեխնիկան ուժեղ թափով գարգացավ: Մեկը մյուսի հետևից նորանոր գյուտեր կատարվեցին: 1835 թ. Պուրկինյեն գտավ թռչունների սաղմաբջիջիկ. Բրուսներ՝ 1833 թ. հայտնաբերեց բուսական բջիջների կորիզը, 1838—1839 թ. թ. դերմանական գիտնականներ Շլյյեն և Շվանը իրենց կյանի աշխատություններով յեկան վերջնականապես հաստատելու բուսական և կենդանական մարմինների բջիջային տեսությունը, վորը կենսաբանության ամենանշանափոր և հիմնական սրենքներից մեկը պիտի համարել: Բջիջային տեսությունը կենդանիների և բույսերի ուսումնասիրության համար նույնն է, ինչ աստմական տեսությունը քիմիայի համար:

Առաջին հետազոտողները յենթադրում էին, վոր բջիջ մեջ գլխավոր դերը թաղանթին է պատկանում և վոչ թե նրա մեջ գտնվող հեղուկային բովանդակության, բայց հետագա հետազոտությունները պարզեցին, վոր բջիջի ետևան մասը՝ դա նրա հեղուկային մասն է, վոր կոչվում է պրոտոպլազմա (նախանյութ): Այս հարցի լուծումը ավեց դերմանական գիտնական Մուլլը 1946 թ., վորի ուսումնասիրությունները անվիճելի կերպով հաստատեցին, վոր պրոտոպլազմայի մեջ են կատարվում բջիջի բոլոր կենսական պրոցեսները—սննդառությունը, շարժունները, գրգռվելը, բազմացումը և այլն, և վոր բջիջաթաղանթը այնքան էլ կարևոր դեր չի խաղում բջիջի կյանքում, վոր կենդանական բջիջներում նա հաճախ բուրբուխի բացակայում է, նա պաշտպանում է պրոտոպլազմային ծառայելով նրա համար վորպես կմախք:


Այսպես կենդանի սրգանիզմը բազկացած է բջիջներից. նա ներկայացնում է իրենից մի հսկա բջիջային կոլեկտիվ, և վոր նրա մեջ տեղի ունեցող կենսական պրոցեսները վոչ այլ ինչ են, յեթև վոչ բջիջների մեջ կատարվող կենսական պրոցեսների հանրագումարը: Բնական և սերմն, վոր մեր կյանքի պրոցեսները հանդիսանում են համար, հարկավոր է նախ՝ կյանքի այդ ելեմենտար միավորները—բջիջները կազմության և աշխատանքին ծանոթանալ:

Նախ մի յերկու խոտք բջիջների Բակալի մասին՝ սրգանիզմում: Պիտի ստեղ, վորը հաջվել ճշտությամբ բջիջների թիվը մի վորեկ սրգանիզմի մեջ, մանավանդ բարձր տեսակի, դա վերին ստաթիմանի դրվվոր մի յնդիք է: Մի քանի մանր կենդանիների մեջ մասնով բջիջների թիվը հաջողվել է պարզել: Ուրինակ պատասակավարքերին պատկանող հեղատիմայի մարմինը ճիշտ 958 բջիջից է կազմված. նույնպես պարզվել է, վոր շատ կենդանիների սրգաններ վորոչ թիվով բջիջներից են միայն բազկացած: Սուշոր և բարձր կարգի կենդանիներից շատերի բջիջների թիվը անշափ մեծ լինելու պատճառով ուղղակի անհնար է հաջվել նրանց. 65 կիլո կողոց մարդու մարմնի բջիջների թիվը համար է մոտավորապես 350 տրիլիոնի, վորոնցից 25 տրիլիոն միայն արյուն կարմիր դնդակներ, 9 միլիարդ մեծ ուղեղի կեղևի մեջ և այլն: Ամեն մի վարկյանում մարդու մարմնի մեջ մասնանում են 125 միլիոն բջիջներ և նույնքան էլ նորերը ծնվում:

Այսպիսի հսկայական թիվը պատկերացնելիս, անում և պրոֆ. Շմիդը, շեռ իմանում, ինչի վրա ավելի գարմանաս, արդյոք դարձանալին այն է, վոր այդքան բազմաթիվ կյանքի միավորներ մի ամբողջություն են կազմում, և միանական նպատակի ձգտում—սրգանիզմը պահպանել, թե այն, վոր այդ մանրիկ միավորներից ամեն մեկը իր

հասուկ անկախ կյանքով և ապրում, նա ծնվում, աճում, կազմում և իր գոյության համար և մեռնում և ինչպես ինքնուրույն անհատ:

Անցնելով բջջի կազմաբյուրեղի, պիտի տեսի, վոր նա կազմված է պրոտոպլազմայից, կորիզից, ցենտրոզոմայից, (կենտրոնական մարմնիկ) և թաղանթից (տես նկար № 1): Իրենց ձևերով բջիճները յերկ-



Նկ. № 1. ԲՋԻՋԸ ՍԻՆՄԱՍԻԿ:

Պրոտոպլազման և նրա մեջ պարունակվող տարրեր մատերը (6, 8): 7—վակուոլներ: 5—ցենտրոզոմա: 2—կորիզը քրոմատին և աքրոմատին նյութերով, 4—կորիզակ:

տասարդ շրջանում լինում են կյոք, հետո բնդուսում են դանազան ձևվեր՝ ովալ, գլանաձև, իլիկաձև, տափակ, աստղաձև և այլն, նախած թե սրբանիզմում ինչպիսի աշխատանք են կատարում նրանք: Նույնպես բազմատեսակ են բջիճները և իրենց մեծությամբ: Նրանց չափերը համար բնդունված և միլիմետրի $\frac{1}{10000}$ մասը, վորք միկրոն և կոչվում: Բջիճների մեծագույն մասը կարելի չէ տեսնել միայն միկրոակոպի միջոցով. աչքով տեսանելի խոշոր բջիճների խմբին պատկանում են յերկհենցադների, թռչունների ձվարբիճները, սխորանի, ձմերուկի հյութով լի բջիճները և այլն:

Պրոտոպլազման ներկայացնում է իրենից—անդույն, ջրի մեջ չլուծվող, մածուցիկ մի լորձնաճյուղ: Նա չի, ինչպես արդեն գիտենք, բջջի կենսական հասկումները կրթավոր կրողը, նրա կենդանի մարմինը: Նրա մեջ տեղի ունեցող բարդ ֆիզիկո-քիմիական փոխարկումներով են պայմանավորված բջջի, հետևապես և ամբողջ սրբանիզմի

բոլոր կենսական պրոցեսները. առանց պրոտոպլազմայի բջիճը մեռնում է:

Պրոտոպլազմայի քիմիական բնակցիան (հակազդեցությունը) համարվում է նեյտրալ. նրա տեսակարար կշիռը շատ քիչ է տարբերվում ջրից և հավասար է 1,048. լույսի ճառագայթների բեկումը նրա մեջ ափսիսի ուժեղ է, քան ջրի մեջ:

Քիմիական բաղադրությամբ տեսակերից պրոտոպլազման ներկայացնում է իրենից դանազան կոլլոիդ նյութեր, վորոնք ջրի մեջ չեն լուծվում և չեն անցնում կենդանական թաղանթներով, և սրբանական ու անսրբանական կրիստալիդներ (կոլլոիդներին հակոտնյա) ջրային լուծույթների համադրություն: Քիմիական տարրերից մշտական նրա մեջ հանդիպում ենք 12 տարրեր—ածխածին (C), ջրածին (H), թթվածին (O), բորակածին (N), ծծումբ (S), լուսածին (P), բրոն (Cl), կալիում (K), նատրիում (Na), մագնիսիում (Mg), կալցիում (Ca) և չերկաթ (Fe): Բացի այս մշտական տարրերից վորոշ տեսակի բջիճների մեջ գտնվում են նաև սիլիկիոն (Si), ֆտորը (F), և յոդ (J): Այս բոլոր տարրերից բջջի մեջ առաջ են գալիս բազմազան և բազմապիսի բարդ սրբանական և անսրբանական միացություններ (սպիտակուցներ, լիպիդներ, ճարպեր, ածխաջրեր, աղեր, թթվումներ, և այլն): Այդ ներբջիճային պրոցեսների մասին մենք գետ չառ քան չգիտենք:

Ինչ մերարերում է պրոտոպլազմայի ներքին, նուրբ կառուցվածքին, պիտի նկատել, վոր այդ հարցի շուրջը գիտնականները գետ համաձայնության չեն յեկել. այդ խնդրի լուծման համար առաջարկված են մի քանի տեսություններ— թերային, սպունգային, փրփրային, հատիկային և այլն: Վորն է դրանցից ճիշտը, դժվար է առ այժմ տեսել: Մեծ թվով հետազոտներ ունի Բյուչչիի փրփրային տեսությունը:

Բջջի յերկրորդ կարևոր մասը՝ կարիզն է, վորը սոխորարար կյոք կամ ովալ ձև ունի. լինում են մի, յերկու և բազմակորիզյա բջիճներ. բջիճների ախրոզ մեծամասնությունը կորիզ ունի, բայց պատահում են և առանց կորիզի: Փորձերը ցույց են տալիս, վոր բջջի կյանքում կորիզը շատ կարևոր նշանակություն ունի. կորզահան արած բջիճը այլ ևս չի կարողանում անվել և աճել, բայց կորիզն ևլ առանց պրոտոպլազմայի կորցնում է կենսական ուժը:

Կորիզը իր նուրբ կառուցվածքով միատարր չէ. նա կազմված է յերկու նյութերից— ներկասեր քրոմատինից և անդույն աքրոմատինից: Ներկայումս արդեն կառվածից դուրս է այն, վոր բջջի բոլոր ժառանգական հատկությունները կրոմատինի մեջ են պարփակված և բջջի բազմազան ժամանակ նրա հետ միտոսին են բջջից բջիջ անցնում:

Յենտրոպոման (բջջի կենտրոնական մարմնիկը) ներկայացնում է իրենից մի շափաղանց փոքր, աչքով աննկատելի բջջամասն, վտճբ հանդեր է դալիս միայն բջջի բաժանման ժամանակ և կարևոր դեր խաղում այդ պրոցեսում:

Թագանք—ունենում են փոշ բոլոր բջջիները: Այն բջջիները, վորոնք գուրկ են թաղանթից (դիստոփորապես կենդանական) նրանց պրոտոպլազման իր մակերեզույթի վրա կազմում է ափելի խիտ շերտ՝ աչուկես կոչված եկտոտեյա:


Բացի այս դիստոփոր մասերից՝ պրոտոպլազմայից, կորիզից, ցենտրոպոմից և թագանթից, բջջի ունի և յերկրորդական մասեր—գանազան տեսակի հատիկներ (տուր), պիղմենտներ (քլորոֆիլ, հեմոգլոբին), յուղի կաթիլներ, աչուկես կոչված կծկուն և ժարոտգանիսն վուկուլներ: Դարձնք ներկայացնում են իրենից վորոշ հյուսված լի ասրածու թյուններ պրոտոպլազմայի տարբեր մասերում: Կցկուն փուկուսները շրտմիկ կերպով կծկվում և յայնանում են և ծառայում վորպես արտահանման գործարաններ, մարտոպական վակուոլներում տեղի յեն ունենում սննդանյութերի յուրացման պրոցեսները վորոշ փուկուսական հյուսվածքի (ֆերմենտների) ազդեցությամբ:

Այս և ընդհանուր գծերով կյանքի իսկական հիմքը կազմող, կյանքի միավորը—բջջի կազմությունը, նրա անատոմիան: Մենք տեսնք, փուր բջջի բոլորովին ել պրոտոպլազմայի մի պարզ կաթիլ չի ներկայացնում իրենից, ինչպես դա կարող է յին յենթադրել բջջի անկատար գործիքներով դիտողները: Այժմ փոշ մի կատակած չկա, վոր բջջի իր բարձրագույնի մասերով՝ սրգանիղներով—կորիզ, ցենտրոպոմ, վակուոսներ և այլն, ինքնին մի վերին աստիճանի բարդ տարրական սրգանիղ և ներկայացնում: Այդ սրգանիղմի բարդությունը ախտա մասածել և տալիս, թե գուցե ինքը բջջի իր հերթին ափելի մանր, ինքնուրույն կենդանի միափորներից և կազմված: Արդեն բովական մեծ թվով փորձեր են կատարված բջջի տարբայություն ափելի մանր կենդանի (փուկուսներ) (բիսֆոր, բիոգեն և այլն): Բայց այդ հարցը յենթադրություններից այն կողմը դեռ չի անցել, ուստի և ստացված մենք պիտի ընդունենք բջջի փորպես ամենափոքր և ամենապարզ կենդանի միավոր:

Անցնենք այժմ բջջի մեջ տեղի ունեցող կենսական պրոցեսներին (չարժում, գրգռականություն, նյութերի փոխանակություն, աճում և բազմացում):

Բջջի շարժման ամենապարզ ձևը մենք գիտում ենք ամ յարայի վրա (նկար №2): Վերջինս կանգնած քաղցրահամ ջրերում ուղարկ միաբջջի

եյակ է: Մանրագիտակով դիտելիս տեսնում ենք, վոր նա անպարզ շարժվում է արձակելով իր մարմնի այս կամ այն մասում պրոտոպլազ-



Նկար № 2. ԱՄՅՈՒՍ:

II—կորիզ: CII—կծկող վակուոլ: N—ընդունած սնունդը:

միկ հատիկումներ—կեղծ փոսիկներ (պսեվդոպոդիա) և աչուկետով տեղից տեղ շարժվում: աչուկետի շարժումը կոչվում է ամ յարային շարժում:

Չուրկ լինելով թաղանթից ամ յարան շարունակ փոխում է իր ձևը և մարմնի տարբեր կողմերից պսեվդոպոդիաներ արձակելով կարողանում է նաև շարժման ուղղությունը փոխել: Շատ հոսիանական և, վոր նա պոմմ և արտաքին աշխարհի ջերմային, յույսի, սննդի և այլ փոփոխությունները և գրանց համեմատ ել փոխում է իր ուղղությունը: Յեթե ջրի կաթիլին, վորի մեջ դիտում ենք ամ յարային, մի ծայրից ամ վրայանք նրա համար տհամ կամ փնտտակար մի վորեկ նյութ, ամ յարան իսկույն կզգա այդ նյութերի ներկայությունը և հետանալով փորձեր կանի դեպի հակառակ կողմը, աչուկետով պարզ է, վոր այս երևանաուր սրգանիղմը իր շարժումների ժամանակ ղեկավարվում է զգացողությամբ—գրգռականությամբ, վորը պրոտոպլազմայի հիմնական հատկություններից մեկը պիտի համարել:

Ամ յարանման շարժումներ մենք հանդիպում ենք և բարձր կենդանիների ու մարդու բջջիներին մեջ (արյան սպիտակ գնդիկներ): Բայց բացի ամ յարանման շարժման այս ամենապարզ տեսակից, գոյություն ունեն շարժման և ափելի կատարելագործված ձևեր, ինչպիսիք են—թաբթիչային, մարակային և մկանային:

Բջջի հետևյալ կենսական արտահայտությունը նրա սննդառուք յուրեւ կամ այլ խոտորով ասած, նրա մեջ կատարվող նյութերի փոխանակու- թյունն է, վարը նրա մեջ է կախնում, վոր բջջը իրեն շրջապատող միջավայրից ընդունում է վորտը նյութեր, իր վախուռններում յենթար- կում բազմապիսի փոփոխումների, և անպեսք նյութերը կծկուն վա- կուռնների միջոցով կամ այլ ճանապարհներով դուրս շարժում իրե- նից: Այս յերկու հակադիր պրոցեսները— մեկը նյութերի յուրացում (ասիմիլյացիա), մյուսը նյութերի քայքայում (դիսսիմիլյացիա), ամեն մի կենդանի բջջի՝ թե բուսական, թե կենդանական, հիմքն են կազմում:

Ինչպես ասեցինք ասիմիլյացիա նշանակում է յուրացում, այ- սինքն բնդունված սննդանյութերի ավել բջջին հատուկ կենդանի նյութերի վերածելը: Ասիմիլյացիան լինում է յերկու տեսակի: Նախ, վոր նորից կարծվում է կենդանի նյութ— պրոտոպլազմա, և ավելաց- վում յերթմին. այսպիսով բջջը աճում, մեծանում է, յերկրորդ, վոր բնդունված սննդանյութերից բջջում համադրվում է առաջ են գալիս նորանոր սրգանական միացություններ (պիգմենտներ, ֆերմենտներ, թթվաներ և այլն) բջջի բազմաթիվ և բարդ կարիքներին ծառայե- լու համար:

Ասիմիլյացիան պրոցեսները գերազանց ակն են բունում ավելի բուսական աշխարհում. այստեղ է, վոր արեգակի ճառագայթների շը- նորհիվ բույսերի կանաչ պիգմենտ (քլորոֆիլ) պարունակող բջջիները սնորգանական նյութերը վեր են ածում սրգանական նյութերի (սպը- յի, շաքարի, յուղերի, սպիտակուցների և այլն), կատարելով այդ- պիսով սրգանական աշխարհի ամենանշանավոր սինթեզը:


Ինչ վերաբերում է դիսսիմիլյացիային— դա նշանակում է քայքա- յում, ապրրոյություն: Սկզբունքորեն այդ պրոցեսը նույնն է թե բու- սական, և թե կենդանական բջջիներում: Դիսսիմիլյացիան պրոցեսը կախնում է նրանում, վոր բարդ մոլեկուլային նյութերը վեր են ած- վում ավելի պարզ մոլեկուլային մարմինների, ինչպիսին է ջուրը, ածխածինը, գազը, միզանյութը և այլն: Առանց թթվածնի դիսսիմի- լյացիան պրոցեսները ակտի չեն կարող ունենալ, ուրիշ խոտորով, դիսսի- միլյացիան սննդանյութերի անընդհատ աչրում և սրբիղացում է նը- շանակում— թթվածնի անընդհատ ներմուծման (չնշառության) շնոր- հիվ:

Դիսսիմիլյացիայի ընթացքում սննդանյութերը անընդհատ աչր- վում, սպառվում են, և յեթև գրեից նրանց փոխարինող նոր նյութեր չեն ներմուծվում, այդ գեպում բջջը քաղցից հյուծվում, մահանում

է: Դիսսիմիլյացիան յերեկույթները գերազանց ակն են բունում ավելի կենդանական քան թե բուսական աշխարհում:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր բջջի մեջ կատարվող նյութերի փոխանակու- թյունը— ասիմիլյացիան և դիսսիմիլյացիան, մի վերին աստիճանի բարդ գործունեություն է՝ բաղկացած առանձին պրոցես- ներից— նյութերի ներմուծումից, նրանց փոփոխությաններից և ան- պեսք նյութերի արտաթորությունից: Այս բոլորը կատարվում է բջջի պրոտոպլազմայի մեջ և գրա հետևանքը այն է լինում, վոր մի կողմից յուրացվում է պրոտոպլազմայի աշխատանքի ընթացքում ասած յեկամ պակասը, մյուս կողմից պրոտոպլազմայի քանակն է ավելանում, աճում և տեղի ունենում: Յերթադարձ բջջիներին մեջ ավելի յետան- դուն նյութերի փոխանակություն է լինում: Նրանք շատ սնունդ են կրնում և այդ պատճառով էլ ավելի արագ աճում, հասունանում և բազմացման ընդունակ դառնում:

Բջջիները բազմացումը կատարվում է կիսվելով, վորի հետևանքով մայր բջջից միանգամայն նման յերկու նոր բջջիներ են ստացվում: Այդենից առաջ կորիզն է ձգվում և Տ-ի ձև ընդունելով միջին մասը բա- րակում է և յերկու փոքր կորիզ ստացվում: Միննույն ժամանակ պր- ոտոպլազման էլ և սկսում մեջակից բարակել և հետո կտրվել: Այս- պիսով մի բջջից ստաջանում են յերկու փոքր բջջիներ: (Նկար № 3):



Նկար № 3. ԱՄՅՈՒԱՅԻ ԲԱԶՄԱՅՈՒՄԸ (ուղակի բաժանում):


Մրանք մեծերից տարբերվում են միայն իրենց չափով. սնվելով չուտով նրանք սկսում են աճել և մայր բջջի մեծության են հասնում: Սակայն պիտի նկատել, վոր բջջի աչպիսի ուղղակի բաժանման ձևը համեմատաբար սակավ և սրտասուզ: Սովորաբար բջիջները բաժանումն ավելի բարդ պրոցեսս է ներկայացնում և այս դեպքում կոչվում է անուղղակի բաժանում կամ կարիոկինեզ (Նկար № 4): Այս պրոցեսսում կորիզը և ցենտրոպոման շատ մեծ դեր են խաղում. կորիզի մեջ գտնվող չերկու բաղադրիչ մասերը՝ քրոմատինն ու աքրոմատինը վերին ստանձանի բարդ փոփոխությունների և տեղափոխումների են յենթարկվում, վորանց գլխավոր նպատակն է քրոմատինի հավասար բաշխումը յերկու յերիտասարդ բջիջների մեջ:

Ուղղակի բաժանումը, վորպես բաժանման ավելի նախնական և պարզ ձև, գլխավորապես տարածված է ստորին կարգի որդանիզմների մեջ, մինչդեռ կարիոկինեզը հատուկ է բարձր որդանիզմներին և մարդան:

Ամփոփելով բոլոր վերը ասածները բջջի մասին, մենք զարևո ենք այն յեղբակացություն, վոր կյանքի այդ անվերջ փոքր միավորների մեջ տեղի յեն ունենում նույն կենսական պրոցեսները, ինչ վոր և յուրաքանչյուր ավելի բարդ որդանիզմի մեջ, և վոր գլխավորն է, այդ պրոցեսսները հենց աչստեղից սկսած հիմնվում են աչխատանքի բաժանման մեծ սկզբունքի վրա, վորը աչսպիսի զարգացման է հասնում, ինչպես կանսենք, մարդու մեջ: Արդեն բջջի մարմնի բաժանվելը որդանորդների (թուղանթ, կորիզ, վաղուտներ և այլն) իրենց հատուկ Փունկցիաներով—զա սկիզբն է անատոմիական և ֆիզիոլոգիական աչխատանքի բաժանման իրենց պրիմիտիվ ձևերով:

3. Հյուսվածքներ

Մանկելով բազմաթիվ որդանիզմի մեջ անթիվ անհամար միլիոններով, կազմելով նրանից մի նեղբաշնակ ամբողջություն, մի բարդ կուլյեկտիվ միավոր— մի որդանիզմ, պարզ և վոր ամեն մի միավոր բջիջ այլ ևս չի կարող վարել այնպիսի կյանք, վորպիսին հատուկ է ազատ ապրող բջիջին, այլևս հավասար չափով նա չի կարող կատարել իր բոլոր կենսական Փունկցիաները, այլ ընդհակառակը, նրա մեջ պիտի զարգանայ գլխավորապես մի վորեւե Փունկցիա, նա պիտի մասնագլտանա մի վորեւե աչխատանքի մեջ, յինի զա որդանիզմի պաշտպանության, աննպատության, շարժում կամ մի այլ Փունկցիա, միևնույնն է: Աչխատանքի բաժանման սկզբունքը (դիֆֆերենցիացիան) բղխում է կուլյեկտիվ կյանքի էյուլյուսից, այստեղ նա վաչ միայն նպատակահարմար է, այլ և անհրաժեշտ:



Նկար № 4. ԲՋՋԻ ԿԱՐԻՈԿԻՆԵՏԻԿ ԲԱԺԱՆՈՒՄԸ (սեմանտիկ):

կատարելով որդանիզմի մեջ միեւնույն աշխատանքը, (աշխատանքի ֆիզիոլոգիական բաժանում), բջիջները համապատասխան և անասումբական ձևեր են ընդունում: Այսպիսի միատեսակ Փունիցիաներով և կազմութեամբ բջիջներէ խմբերը որդանիզմի մեջ կոչվում են հյուսվածքներ: Կենդանիների մեջ հայտնի յեն չորս հիմնական հյուսվածքներ—էպիթելիալին, շարակցական, մկանային և նյարդային:

Եպիթելիալին հյուսվածք—կոչվում է այն հյուսվածքը, վորը ծածկում է մարմնի մակերեսը զբոսից, և մարմնի ներքի խորշերի կողմից: նրանք բառ բջիջների ձևի դանդաղանում են, լինում է հարթ, գլանաձև, և թարթչավոր էպիթել (նկար № 5): Ըստ շերտերի



Նկար № 5. ԵՊԻԹԵԼԱՅԻՆ ՀՅՈՒՍՎԱԾՔ:
 a.—Ցիլինդրիկ թարթչավոր էպիթել: b.—չորթ էպիթել: c.—գլանաձև էպիթել:

բանակի էպիթելը լինում է միաշերտ և բազմաշերտ: Ստանձնելով գլխավորապես պաշտպանողական Փունիցիաներ, էպիթելիալին հյուսվածքը որդանիզմում կատարում է նաև վորոշ հյուսվածք արտադրող (գեղձային) հյուսվածքի դեր:


Վորպես պաշտպանող հյուսվածք էպիթելը մարմնի զբոսի մակերեսի վրա կազմում է մի անընդհատ ծածկույթ, վորտեղ բջիջները դասավորված են միմյանց վրա մի քանի շերտերով. սա այսպես կոչված վեցնամաշիբ կամ էպիդերմիսն է: Վերնամաշիբ միմյան թափ շերտերն են բաղկացած կենդանի բջիջներից, վերի շերտերը կազմված են մեռած, պրոտոպլազմայից դուրի և յեղջերացանց դատարկ բջիջներից:

Թարթչավոր էպիթելը դանվում է ոչառար ճանապարհների ներսում, վորտեղից շարժելով այդ թարթիչների անընդհատ շարժումների հետագիում են դեպի դուրս փոշու և այլ մարմնիկների մասնիկներ, վորանք այսպես կարող էյին կուտակվել թոքերի մեջ և վտանգել նրա աշխատանքը:

Գեղձային էպիթելի դերը կայանում է նրանում, վոր որդանիզմի կարիքների համար այս էպիթելի բիմիադես մասնագիտացած բջիջներում պատրաստվում են բարդ կազմություն սննեցող և սննդանյութե-

րի վրա՝ տղեցիֆիկ կերպով ազդող նյութեր, այսպես կոչված Ֆերմենտներ:

Գեղձերը լինում են միարջիջ և բազմարջիջ (նկ. № 6): Միարջիջ




Նկար № 6. a, b, c ԳԵՂՁԵՐԻ ՉԵՎԵՐԸ:

a—պարզ խողովակաձև: b—ճյուղավորված խողովակաձև և c—վողույցաձև գեղձ:


51515
1001
0200

գեղձերը գլխավորապես ցրված են հատ-հատ, աղիքային խողովակի և ոտամոքսի ներքի մակերեսը պատասպարող էպիթելի մեջ, և իրենց հյուսվածք լորձուղի ձևով արտադրում են էպիթելի մակերեսի վրա: Բազմարջիջ գեղձերը լինում են խողովակաձև կամ վողույցաձև և առաջ են դալիս մարտոպական ապարտի տարրեր մասերում էպիթելի ներֆիումով. այս գեղձերին են պատկանում թքագեղձերը, յարդային և յենթաստամոքսային գեղձը: Մրանց մասին կրտափի առանձին գրվում:

Շարակցական հյուսվածքը մարմնի ամենատարածված հյուսվածքն է, մի կողմից նա ծառայում է մարմնի փափուկ մասերի հենման, մյուս կողմից գանապան գործարանների միմյանց հետ կապակցելու համար: Մարմնի տարրեր մասերում այս հյուսվածքը համապատասխան ձևով է փոխվում: Նա հանդես է դալիս, կամ վորպես՝ ա) մանրաթելաչյուն շարակցական հյուսվածք, որինակ մկանների, հոդերի ամուր ջրաթելերը և կապերը, մսի մեջ գանվող թաղանթները և փառերը, ուղեղի պտտյանները և այլն:




բ) կամ փորպեա կոճիկ (նկար № 7), և գ) կամ փորպեա փոսկր (նկ. № 8): Շարակցական հյուսվածքի այս ձևափոխումները տեղի չեն ունենում հյուսվածքի մեջբջջային տարածութուններում, փորք այստեղ ափելի մեծ տեղ և բնանում է խոշոր դեր և խոտրում համեմատած ուրիշ հյուսվածքների հետ: Այլ մեջբջջային տարածութունները կազմվում են կողպաղեն նյութից, փորք տաք ջրի մեջ լեփելիս սոսինձ է



№ 7. a ՄԱՆՐԱԹԵԼԱՅԻՆ ԿՈՃԻԿ:

տալիս. նրան և պարտական շարակցական հյուսվածքը իր ամբողջությամբ: Այստեղ են այս հյուսվածքի բջիջները սննդի հանրային նյութերից կատարյում որդանիզմի ամուր դենքը՝ փոսկրային կմախքը: Այս



№ 8. Խողովակաձևի վնսկրի շՍՍԱԾԸ բոս լայնություն:


a - Վոսկրային բջիջների բնած տարածութունները: 3 - Հավերժան անցք:

հյուսվածքի ստիպաթիվ բջիջային մասը զբաղում է հտտ-հտտ մեջբջջային հիմնական նյութի մեջ և սազմային փիճակում կյուս, սփալ կամ իլիկի ձև ունին և ափելի մեծ թվով են լինում: Հետագայում նրանք ընդունում են այլ ձևեր համապատասխան շարակցական հյուսվածքի տեսակին—փոսկրի մեջ աստղաձև, կոճիկի մեջ ձվաձև, ճարպային հյուս-

վածքների մեջ (այս յեղ շարակցականի մի այլ ձևափոխումն է) խոշոր կյուս բջիջների ձև և այլն:

Մկանային հյուսվածքը նույնպես որդանիզմի ամենատարածված հյուսվածքն է, նա կազմում է մարմնի քաշի 35-40 տոկոսը: Այս հյուսվածքի հիմնական տոանձնահասակությունը կայանում է նրա բջիջների փերին աստիճանի արագ և կատարյալ կծկիլիյու ընդունակության մեջ-այս հյուսվածքի շնորհիվ և որդանիզմը կատարում իր բոլոր տեսակի շարժումները:

Մկանային բջիջը յերկար և իլիկաձև է, նրա պրոտոպլազման վեր և ստվել բազմաթիվ մանրաթելերի (ֆիբրիլների), փորոնք իրենց կազմությամբ յերկու խմբի յեն րամանում—հարթ և ընդլայնաչերտ (նկ. № 9): Հարթ մկանները գանվում են ներքին գործարաններում—



№ 9 a, B, C ՄԿԱՆԱՅԻՆ ՀՅՈՒՍՎԱԾԲ:

A—Հարթ մկանային բջիջ: B—Մկանային բջիջ ֆերիլները: C—Ընդլայնաչերտ մկան:


ստամոքսի, աղիքների, արնատար անոթների պատերի մեջ, այդ մրկանների շարժումները մեր կամքից անկախ են տեղի ունենում: Մնացած մկանները պատկանում են ընդլայնաչերտ խմբակին. դրանք դրամանում են կմախքի վրա, միացնում են փոսկրներին և կազմում են վերջինների հետ որդանիզմի մոտորական ապարատը. ընդլայնաչերտ մրկանների բջիջները ափելի բարձր վորակի յեն, քան թե հարթ բջիջները. նրա ափելի արագ և ափելի կատարյալ կծկումներ են կատարում:

Մկանը, ինչպես և մարմնի յուրաքանչյուր գործարան ընդհանրա-

պես, բաղկացած է գլխավորապես այս գործարանի համար հասուել մի հիմնական հյուսվածքից—ներկա գեպրում մկանային հյուսվածքից: Սակայն բացի մկանային հյուսվածքից, մկանի կազմութան մեջ գրանում ենք մի շարք այլ ուսանողական գեր կատարող հյուսվածքներ: Մկանի յերեսին շարակցական հյուսվածքը մի բարակ թաղանթ է կազմում, իսկ սրբակի նման հազնում է մկանին: Դա այսպես կոչված արտաքին պերիմիզիումն է: Բացյ այդ թաղանթից դեպի մկանի խորքերը թափանցող համակցվածներ են անցնում, վճրոնք մկանային նյութը ավելի ու ավելի փոքր գաշտերի յեն բաժանում, մինչև փոք չեն հասնում բջիջին: Թաղանթի այս ներքին մասերը կոչվում են ներքին պերիմիզիում: Մկանը (միսը) յեփելիս շարակցական հյուսվածքը (պերիմիզիումները) քայքայվում, սոսինձ են դառնում և մկանը վեր է ածվում առանձին-առանձին թելիկներին: Այսպիսով մկանի մեջ շարակցական հյուսվածքից գոյանում է մի նուրբ կմախք, այդ կմախքի միջնապատերով են թափանցում մկանի ներսը արյան անոթները և նյարդերը ու սպահստում մկանային բջիջի անարգել կենսագործությունը:

Նյարդային հյուսվածքը սրգանիզմի ամենարարձը կախիֆիկացիայի հասած հյուսվածքն է: Նրա դերը կայանում է մի կողմից արտաքին ուշխարհից, մյուս կողմից մարմնի ներքին գործարաններից գրգիռներ քնդունելու մեջ, մյուս կողմից մարմնի ներքին գործարաններից գրգիռներ քնդունել, այդ գրգիռները նյարդային կենտրոններում բջիջների մեջ վերածշտկման յենթարկել և համապատասխան հրատանդներ ուղարկել պերիֆերիկ սպարաաններին ինչպես վարվելու:

Նյարդային բջիջները մեր սրգանիզմի խոշոր բջիջներիցն են (նկ. № 10): Նրանց մեջ պատահում են 5-150 միկրոն մեծութան և հաստ-



№ 10. ՆՅԱՐԿԱՅԻՆ ԲՋԻՋ (սխեմ):

1. Կենդրիոններ: 2. Անվրիա: 3. Կոլլատերալներ: 4. Մայրի սպայարատ:

րակ աչքով նկատելի բջիջներ: Իրենց ձևով նրանք յինում են բազմապոն—կլոր, պիրամիտալ, աստղաձև և այլն: Բջջի մարմնից դուրս են դալիս յերկու տեսակի համակցվածներ՝ յերկայր և կարճ: Կարճ համակցվածները դուրս են գալիս բջջից մեծ թվով և անմիջապես ծառանման բաժանվելով կազմում են պրոտոպլազմատիկ թելիկների մի խիտ ցանց (կենտրիաններ): Կենտրիանների միջոցով նյարդային բջիջները կապ են հաստատում միմյանց հետ մոտ ստրածութան վրա:


Ինչ վերաբերում է մյուս յերկար համակցվածին, —վերջինս յինում է մեկից փոչ ավել: դուրս գալով բջջից և կարելով շատ թե քիչ յերկար ճանապարհ՝ (մինչև մի մետր), նա հասնում է իր վորոշված կետին (յինի դա նյարդային բջիջը, մկանը, կամ գեղձը) և այստեղ վերջանում է ծայրի սպարատով: Ծանապարհին սջ և ձախ նրանից դուրս են գալիս հյուղեր—կոլլատերալներ:

Բջջից դուրս գալուն պես այս համակցվածը չընապատվում է յերկու թաղանթներով, —առաջինը ներվային հոսանքը մեկուտացնող միելինյան թաղանթը, յերկորդը պաշտպանողական գեր կատարող շվանյան թաղանթը: Յերկայր համակցվածը կոչվում է նեվրիտ: Բազմաթիվ նեվրիտներից են կազմվում նյարդերը, սրգանիզմի այդ գորեղ հաղորդակցութան ճանապարհները:

Նյարդային բջիջը իր բոլոր համակցվածներով վերցրած մի ամբողջություն է կազմում, իսկը հայանի յե նեյրոն անվան տակ: Նյարդային բջիջները կենտրոնացած են գլխավորապես գլխուղեկում և փողնուղեկում, իսկոնք միասին կազմում են նյարդային համակարգի կենտրոնական մասը, մինչդեռ վերջինից դուրս յեկող բազմաթիվ նյարդերից կազմվում է պերիֆերիկ մասը: Նյարդային բջջի հիմնական առանձնատեսակությունները կայանում են նրա վերին աստիճանի ութեղ գրգոսկանութան և այդ գրգիռները փորոչ ուղղություններով արագ հաղորդելու քնդունակութան մեջ:

Վերը մենք ստացինք, իսկ նյարդային համակարգութան գերը նրանումն է կայանում, իսկ նրա միջոցով, մի կողմից կապ է հաստատվում սրգանիզմի բազմաթիվ մասերի մեջ: Նյարդային համակարգութան գործունեյութան հիմքում գրված է անդրադարձ շարժման, կամ սեֆերսի սկզբունքը, իսկը ի կատար է ածվում ամենապարզ դեպքում յերկու նեյրոնից բաղկացած, այսպես կոչվող, բեֆերկտոր աղեղի միջոցով (նկ. № 11): Յերը մեկ չընապատող արտաքին միջավայրում ֆիզիկական պայմանների մի փոքեկ փոփոխություն է կատարվում, սրինակի համար բարեխաանությունն է իջնում, անմիջապես այդ փոփոխությունը մեր սրգանիզմի մեջ մի շարք փոփոխություններ և ա-

ուսմանում, վարձք մեր ներսում ցրտի զգացումը թյուր են արտահայտում, իսկ արտաքինում՝ այս կամ այն շարժումներով, վարձք մեր կատարում ենք գիտակցաբար թե անգիտակցաբար, ցրտից պաշտպանվելու համար: Այսպես, ուրեմն, օեֆիբրա յերեկույթի յերկու իրար հետ սերտ կերպով կապված տարրերից և կազմված, մեկը զգացողու-



Նկար № 11. ԲԵՆԼԵԿՏՈՐ ԱՊԵՂ

1- Չգացող նեյրոնը իր նեվրիտով, և ծայրի ապարատով մաշկի մեջ (2, 3, 7)
 6- Ծարժող նեյրոն-նույն ժամերով և ծայրի ապարատով միանի մեջ (5, 4, 8):

թյան պրոցեսը, մյուսը շարժողության: Այդ պրոցեսները օեֆիբրապ ապեզում բաժանվում են յերկու նեյրոնների մեջ, մեկը զգացող նեյրոնի, վարձք նեյրիզի ծայրի ապարատը փոխված և մարմնի պերիֆերիայում (մաշկի մեջ, զեղծերում և այլն), և այդպիսից գրգռվածները կենտրոնաձիգ ուղղությամբ դեպի բջիջն են տանում, ուր մեկ անհայտ կետով այդ գրգռվածները զգայության են փոխվում: Ազդելի մյուս նեյրոնը, դա շարժող նեյրոնն է, վարձք կողմից զենարթաներով կապված և բզգացող նեյրոնի հետ, մյուս կողմից իր յերկար յեյուստով— նեվրիտով կապված և մկանի հետ. զգացող բջիջում աստղացած փոփոխությանը շարժող բջիջին և հարցրում և այստեղից էլ անոթիցով նեվրիտով կենտրոնախույս ուղղությամբ պերիֆերիային հրահանող ուղղությամբ: Նյարդային համակարգությանը կարծես թե հետադրի դեր և կատարում, զգացող և շարժող գործարանները միացնելով նյարդային բջիջների ազնությամբ:

Տարով, որդանիզմի հիմքը կազմող բջիջների և հյուսվածքների այս համաստան տեսությանը, այժմ մի յերկու խոսք ևս կենդանի մարմնի ամենի բարձր միափորձների— այն և որդանների և համակարգությանների մասին: Արդան կամ գործարան ասելով պիտի հասկանալ հյուսվածքների այն համախմբումը, վարձք որդանիզմում կատարում և մի

վարձք հասուկ աշխատանք (որինակ, լյարդ, ստամոքս, թոքեր և այլն): Մի ինդհանուր նպատակի ծառայող որդանների համախմբումից առաջ են գալիս համակարգությաններ (որինակ, թքագեղձեր, ստամոքս, ստամոքս, աղիքներ— կազմում են մարտդական համակարգության, սիրտ, արտերիաներ, վենաներ, արյուն— կազմում են արյան համակարգության և այլն): Համակարգությանների միացումից, վերջապես առաջ և գալիս ամենարարձ միափորձ— որդանիզմը, վարձք ինչպես տեսնում ենք, մի կողմից, աշխատանքի բաժանման սկզբունքի— գիֆիլերենցիայի, մյուս կողմից, աշխատանքի միացման— ինտեգրացիայի ամենարարձը մարմնացումն և ներկայացնում իրենից:

Մարդու որդանիզմը կնքվող համակարգությաններն են՝

- 1— Մենդատության համակարգության,
- 2— Արյան »
- 3— Ծնչատության »
- 4— Արտաթորման »
- 5— Մկանա-փոսկրային »
- 6— Նյարդային »
- 7— Սեռային »

Այս համակարգությանների ուսումնասիրությանը կլինեն նվիրված մեր հետագա գրույցները:

ԱՅՍ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Այս առաջադրության ներածական մասը հետապնդում էր՝

Առաջին՝ ցույց տալ կենսաբանական-բնութագրական գիտելիքների կարևոր դերը գիտական-մասերիայիտական աշխարհայացքի կառուցման գործում, վարձք այնքան անհրաժեշտ և հատկապես մեր դյուր իրականության մեջ աշխատող, նրա բազմաթիվ կրոնական և այլ նախադաշար-ժունքների դեմ պայքարող կուրսուրական աշխատավորների, հատկապես ուսուցիչների համար:

Յերկրորդ՝ ցույց տալ մարդու կառուցվածքի և նրա մեջ տեղի ունեցող կենսական պրոցեսների յուրացման անհրաժեշտությանը՝ ասանձնապես ուսուցչի համար, վարձք սկսելով կերպով մասնակցում և յերկարաթի ֆիզիքական և մասփոր կազմակերպման բարդ գործին:

Առաջադրության բջիջային և հյուսվածքային մասերում նպատակ և գրված՝ ցույց տալ, թե ինչպես գիտական միտքը, թողնելով ամեն տեսակի վերացական դատողությանների և սպեկուլյացիաների ուղիները, կանգնած փորձի և գիտողության սովոր հողի վրա, բայց առ բայց պար-

զում և կյանքի դժվարին պրորիմները, վարոնց թվին պատկանում են և բջիջներն ու հյուսվածքները իրենց զեռ չպարզված շատ կույմերով :

I. Առաջադրուքյան պակասարուքը :

I ներածական մաս .

1. Որգանիզմը վորպես մեքենա .

ա) նմանություններ .

բ) տարբերություններ .

2. Գիտական մեթոդ .

3. Վիտալիզմ .

4. Ի՞նչ և անատոմիան և ֆիզիոլոգիան :

II. Բջիջային տեսություն .

1. Այս հարցի վիճակը XII և XVIII դարերում

2. Շլեյդեն և Շվան .

3. Բջջի կազմություն :

ա) թաղանթ .

բ) պրոտոպլազմա .

գ) կորիզ և ցենտրոզոմա .

4. Բջջի կյանքը .

ա) նյութերի փոխանակություն .

բ) զրգռականություն և շարժում

գ) բազմացում .

III. Հյուսվածքներ :

1. աշխատանքի բաժանում .

2. եպիթելային հյուսվածք .

3. շարակցական հյուսվածք .

4. մկանային հյուսվածք .

5. նյարդային :

III Մերսողական ցուցմունքներ :

Այս և հետագա առաջադրությունների հաջող յուրացման համար, ուսանողը չպիտի բավականանա միայն կարդալով (բնական դիտությունների համար դա շատ քիչ է), այլ պիտի աշխատի առաջին հերթին դիմել վերոթիվ և դիտողություններին, յեթե դա անհնար է, դո՞նե պիտի ձեռք բերի նկարներ, ատլասներ, մոդելներ, վարոնք դժվար չի գտնել մեր դասական կենսաբաններում և այլ յոթնամյակներում : Մեծ չափով դորժին նպաստած կլինի, յեթե ուսանողը մանրադիտակի տակ դիտի միաբջջիներին և բուսական հյուսվածքներին :

IV. Ինֆեռատուզման հարցեր .

1. Որգանիզմի և մեքենայի նմանությունները և տարբերությունները :
2. Տալ բջիջային տեսության զարգացման պատմական սկիզբը :
3. Պրոտոպլազմայի և կորիզի նշանակությունը բջիջում :
4. Ի՞նչ է տսիմիլյացիան և դետիմիլյացիան :
5. Ի՞նչ է հյուսվածքը և նրա տեսակները :
6. Ռեֆլեքս և ռեֆլեկտաք աղեղ :

ՄՆՆԴԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1) Սնունդը փորպես ջերմության և շինանյութերի աղբյուր: 2) Սնունդանյութերի գլխավոր տեսակները և նրանց դերը որգանիզմում (ուպիուսկուցներ, քարպեր, ածխաջրեր, հանփային նյութեր, ջուր): 3) վխտամիկներ: 4) Սնունդի նորման: Նրա փորակը և բանակը տարբեր հասակներում և տարբեր աշխատանքների ժամանակ: Մարսողական գործարանների բնդիանուր բնույթագիրը: 5) Մարսողության մեխանիկա. (քերակներ խոռոչ, բարակ և հաստ աղիքներ): 6) Մարսողության քիմիզը: Ֆերմենտներ: (Թփագեղձեր, պեպսինյան գեղձեր, յեներատամոփսային գեղձ, լյարդ, աղիփային գեղձեր):

1. Սնունդը ջերմության և շինանյութերի աղբյուր.—

Վերը մենք ծանոթացանք, փոր կենդանի մարմինների բնորոշ հատկություններից մեկը, դա նրանց մեջ անընդհատ տեղի ունեցող նյութերի և էներգիայի փոխանակությունն է, որիչ խոսքով աստիճյացիայի և գիսիմիայացի պրոցեսներն են:

Աստիճյացիայի բնկայությունը արտաքին աշխարհից ներմուծված նյութերը (աննդանյութերը) բջջի ներսում ձեփափոխվելով յուրացվում են և ժամանակավորապես անցնում պրոտոպլազմայի բարդությամբ մեջ՝ առաջ բերելով բջջի, հետեփապես և ամբողջ օրգանիզմի աճումը: Սակայն աստիճյացիան պրոցեսներին կարճ ժամանակից հետո հետեփում են գիսիմիայացիան պրոցեսները, յերբ դրանց վերջրած թեփամնի ուղնուժյամբ բջջիներում կուտակված նյութերը գանդող աչքման և բարբայման են յենթարկվում: Այդպիսով միանդամայն անխուսափելի յե գտնում նյութերի սննդաղար սպտումը, նրանց աչքումը, բանի փոր աչդ աչքումն և մասսակարարում կյանքի համար անհրաժեշտ էներգիան աչպես, ինչպես

չաղեմեքենայում փտեղանյութի (փայտի, քարածուխի և այլն) աչքումն և հանդիսանում մեքենայի աշխատանքի միակ աղբյուրը:

Այն տարությանը, փոր գոյանում և բջջի մեջ աննդանյութերի աչքի բերուց, մասամբ մնում և հենց իբրև տարության (կենդանական տարության): Արին՝ մարդու մարմնի տարությանը համասարե 36-37 աստիճան C:

Ջերմության մյուս մասը կենդանի բջջի կողմից փոխարկվում և էներգիայի աչլ ձեփերի՝ մեխանիկական, քիմիական, էլեքտրական և այլն, փորոնց հաջվին կատարվում են բարբ կենսական յերկրյա յլմերը:

Այսպիսով կենդանի օրգանիզմի մեջ ամեն մի ծախս ծածկվում և նրա միակ յեկամտի աղբյուրից՝ արտաքին աշխարհից վերջրած աննդանյութերից:—

Յերբ ծախսերը ավելի շատ են քան յեկամուտը, աչինքն յերբ օրգանիզմը բափաղար շափով չի սնվում, սովում և, վերջիվերջն նա հյուծվում, մահանում և սովից: Ընդհակառակը, յերբ յելլը մուտքից պակաս է, աննդանյութերը կուտակվում են մարմնի մեջ, վերջինս աճում, մեծանում և: Աստիճյացիան պրոցեսներն ավելի մեծ տեղ և ավելի ուժեղ յեափում են կատարվում յերխասարղ հասակում, յերբ օրգանիզմը անընդհատ աճման և զարգացման մեջ և գտնվում:

Արեմն աննդանյութեր մենք կարող ենք անվանել այն նյութերին, փորոնք դրան աշխարհից մանելով օրգանիզմի մեջ, չնորհիվ իրենց ֆիզիքական և քիմիական հատկությանների բնդունակ են, մի կողմից, յրացական և քիմիական հատկությանների բնդունակ են, մի կողմից, յրացական օրգանիզմի նյութական կորուստը, ծառայելով փորպես շինանյութ, մյուս կողմից, — աչլվելով, մասսակարարել և ներգլխ կենսական պրոցեսների համար:

2. Սննդանյութերի տեսակները և դերը

Մարդու մարմնի քիմիական անալիզը պարզել և, փոր միջին քաչի և տարիքի պատկանող պատարզու մեջ գտնվում են հետևյալ նյութերը.

Ջուր	67%
Սպիտակուցներ	15%
Հանքային նյութեր	9%
Ածխաջրեր	6,5%
Ճարպեր	2,5%

100%

Մարդու մարմնի քիմիական կազմության համադաստատան և նրա բնդունում կերակրանյութերը պիտի պարունակեն վերահիշյալ բարբ տե

ասկի նյութերը: Չնայած, վոր մեր գործածած կերակրները բնության մեջ գտնվում են բազմաթիվ ձևերով ու տեսակներով, այնուամենայնիվ սրանց բոլորի մեջ փոչ այնքան մեծ քանակությամբ միայն յերև կերակրի նյութեր կան, վոր կարող են իսկական սննդանյութեր կոչվել, այսինքն սրգանիզմին կարող են ծառայել վորպես շինանյութ, և վորպես ենթադրյալ աղբույր: Դրանք են—սպիտակուցները, ճարպերը և անխաղրերը: Այսպիսով սննդանյութերը բաժանվում են հետևյալ գլխավոր խմբերի:

I. Հանգային սննդանյութեր.—Ջուր և զանազան աղեր, (բյուրային նատրիոն և կալիոն կրային, յերկաթի, լուսածնի և այլն աղեր):

II. Ազոտային որգանական սննդանյութեր.—զանազան սպիտակուցներ բուսական և կենդանական աշխարհից (կազեյին, Ֆիրբին, հեմոգլոբին, փրոբին, լեգումին և այլն):

III. Վնչ ազոտային որգանական սննդանյութեր.—կենդանական և բուսական ճարպեր և անխաղրեր (ոսյա, խաղողաշաքար, գլիկոլեն, կաթնուշաքար և այլն):

Բնույթագրենք համառոտ կերպով այս նյութերը ի նկատի ունենալով նրանց ֆիզիկո-քիմիական և գլխավորապես բնախտական գերը որդախիզում:

Ջուր (H_2O): Ինչպես կենդանիների, այնպես էլ բույսերի համար Ջուրը միանգամայն անհրաժեշտ մի նյութ է, առանց նրա յերկրի վրա կյանք չկա և չի յել կարող լինել: Յեւ դա հասկանալի չէ: կենդանի նյութի մոտ 75-90 տոկոսը Ջուր է: Մի քանի հյութալի բույսերի՝ որինակ վարանդի մեջ ջրի քանակը 95 տոկոսի չէ հասնում, կարտոֆելի պարարների մեջ 75-90 տոկոս, իսկ ծովային վորոշ կենդանիների՝ որինակ սանրավորի մեջ նույնիսկ 96,2 տոկոսը Ջուր է: կենդանիներից անվոզնաչարավորների մեծ մասը—70-90 տոկ: Իսկ վոզնաչարավորներինը՝ 60-80 տոկոսը Ջուր են պարունակում իրենց մարմնի մեջ:

Այսպիսով, բույսերի և կենդանիների մարմնի մեջ Ջուրն ավելի շատ է քան շոր նյութերը, վորպիսի հանգամանքը նրանց կենդանի նյութին առանձնապես ձկուն և շարժուն և դարձնում:

Տվյալ գեպում մարդն էլ բացառությամբ չի կազմում, նորածին յերեխայի մարմնի մոտ 75 տոկ: Ջուր և, հասակավոր մարդու 65 տոկ, նրա ամենաշոր մասը՝ ստամոքիների եմայր 0,2 տոկ: Ջուր և պարունակում, այնինչ վոսկրները 46 տոկ, մկանները և ուղեղը 75,78 տոկ, իսկ ուղեղի ամենագործունյա մասը՝ գորշ նյութը նույնիսկ 85,8 տոկ: Ջուր և պարունակում: Կարելի չէ ստել, վորքան հյութավառք գործունյա, յնտանդոտ և շարժուն և, այնքան նա շատ Ջուր և պարունակում և ջրի ավելի մեծ անհրաժեշտություն ունի:

Հայրնի չէ, վոր յետանդուն աշխատանքի ժամանակ կենդանին ավելի

շատ Ջուր է պահանջում, քան հանդիստ Ժամանակ և ծարավից նա ավելի շատ և մահանում (4-5 արից հետո), քան թե քաղցից—(30-40 արից հետո): կենսական բոլոր պրոցեսներն էլ Ջուր են պահանջում, նա հանդիսանում է վորպես նյութերի լուծիչ, նպաստում է նրանց փոխադրման, ներծծման, արտաթորման, ջերմարեզուլացման և ընդհանրապես ակտիվացնում է բոլոր կենսական—քիմիական պրոցեսները:

Կարելի չէ ստել, վոր թե՛ կենդանիները և թե՛ մենք ինքնբո միշտ ջրի և այն էլ հասող ջրի մեջ ենք ապրում, վորովհետև ամեն սր մեր մարմնով անցնում է փոչ պակաս քան $2\frac{1}{2}$ —3 լիտր Ջուր, մեր հյութավառքները կյանում են այդ Ջուրը և շնչառության, քրանքի և մեղի միջոցով նույն բանակությամբ արտաթորում: Յեթե մեր մարմնի միջով ջրի մի այդպիսի մշտական հոսանք չանցներ, մեր գոյությունն անըմբռնելի կլիներ:

Հանգային կյուրերը նույնպես անհրաժեշտ են կյանքի համար: Առավել անեղը նրանցից բնում է ֆոսֆորաքսֆատական կալցիումը (Ca_2PO_4)²: ջրի վոսկրների կարեորագույն մասն է կազմում, առանց այս աղի կենդանիների և մարդու վոսկրները փափուկ են մնում: Հետևյալ անեղը իր նրանիների և մարդու վոսկրները փափուկ են մնում: $(NaCl)$ —սովորական չանակությամբ բնում է նատրիում Բլորիդը, ($NaCl$)—սովորական անգանի աղը: Մարդու մարմնի յուրաքանչյուր կերպով կշռին որդական անոթայն 0,4 գրամ աղ և հարկավոր, վորպես անպայման մաս նա մանում է մարդու և կենդանիների մարմնի բոլոր հեղուկների մեջ (արմատայն, ավիլի, մեղի, քրանքի, ստամոքսահյութի և այլն): 24 ժամկան ընթացքում մարդն արտադրում է 12 գրամ աղ մեղի միջոցով, 8 գրամ թրի, այս քրանքի, արցունքների և այլն:

Այսու հանգային միացություններից հիշատակենք կալիումի և յերկաթի աղերը, վորոնք կարելիոր գեր են խաղում մեկը հիմնողորքների վերականգնեցման, մյուսը նրա ոքսիդացման պրոցեսներում: Բավական է, վոր այդ նյութներից վորեև մեկը կենդանու սննդից հեռացվի, նրա կենսական յերեվությունները կխանդարվեն, կչեղվեն նորմալից և բոլորովին կունչ կառնեն:

Ազոտային որգանական սննդանյութեր կամ սպիտակուցներ: Բոլոր անասկի սննդանյութերի մեջ սպիտակուցները առաջնակարգ անց են բունում, առանց սպիտակուցների պրոտոպլազման թե բուսական, թե կենդանական, գոյություն ունենալ չի կարող: կյանքի իսկական կրողը սպիտակուցային կյուրերն են, սրանց է պարտական ըջիջը, հետևապես և վոզը որդանիզմը իր հիմնական կենսական պրոցեսներով—շարժվելու, ընդայալ, սնվելու և բազմանալու ընդունակություններով: Որդանիզմի կենդանի ժամանակ սպիտակուցները սովորարար փափուկ, կիտահեղուկ, յերեմն գոնողանման կամ լորձային վիճակումն են լինում, միայն մահից հետո նրանք կարծրանում, մակարդվում են: Սպիտակուցների այս հատկության հետ ամենքն էլ ծանոթ են մվի սպիտակուցի մակարդվելու արկու-

նակից— (ձվի սպիտակուցի անուանով էլ կոչվում են սպիտակուցային բույր միացությունները) : Չվի կիսահեղուկ, ձգվող, համարյա թափանցիկ սպիտակուցը յեֆեյիս դասնում է պինդ, սպիտակ և անթափանց : Այսպես են և բոլոր սպիտակուցները, նոքա մակարոնում են 50-70 ջերմաստիճանից, դանդաղան քիմիական նյութերի՝ որինակ թթուների կամ արկոհոնների ազդեցությամբ : Գործը Ֆերմենտներից և այլն :

Իրենց Ֆիզիքական կառուցվածքի տեսակետից սպիտակուցները այսպես կոչվող կոլլոյդի մարմինների խմբին են պատկանում : Այդ անունը նրանց տվել են կլիստալոյդներից (բյուրեղակերպ) տարբերությամբ : Կերպիններս լուծված միճակում ուրույն հատկություններով են ստացվում և նյութերի յուրահատուկ կարգ են կազմում : Կլիստալոյդների խմբին են պատկանում բոլոր հանրային ազերը : Չրի մեջ լուծվելիս սրանք իսկական լուծույթներ են տալիս, իսկ հանգիստ միճակում գործը շիպանելիս այդ նյութերը նստում են, փորպես փորոչ և կանոնավոր յերկրաչափական ձևեր և մի շարք այլ Ֆիզիքական հատկություններ ունեցող մարմիններ— բյուրեղներ (կլիստալներ) : Կլիստալոյդների հատկություններից մեկն էլ այն է, փոր նրանք բուսական կամ կենդանական թուղանթով ազատ անցնում են : Այսպես յեթև կենդանական փամփուշտի մեջ մենք NaCl լուծույթ լցնենք և մաքուր ջրի մեջ գնենք, աղա կարճ ժամանակից հետո, աղը փամփուշտի թաղանթային պատից կանցնի քեպի գրտի մաքուր ջուրը :

